



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների
ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Կարինե Խուրոյան

Ուսումնական հաստատություն՝ Արտաժառանգական քոլեջի հ 5

հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....	3
ՄԱՍ 1	
Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման խնդիրներն ու նպատակները.....	5
ՄԱՍ 2	
Ջեռուստացույցի, բջջային հեռախոսի, համակարգչի և համացանցի ազդեցությունը սովորողի հոգեբանական զարգացման վրա.....	7
ՄԱՍ 3	
ՏՀՏ-ի կիրառումը մաթեմատիկայի դասապրոցեսում	15
Եզրակացություն	21
Օգտագործված գրականություն	22

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր երկրի կրթության արդիականացման և զարգացման համար անհրաժեշտ է ինտեգրվել կրթական միջազգային գործընթացներին՝ նպատակ ունենալով բարելավելու կրթության որակը: Այն համապատասխանեցնել միջազգային չափանիշներին և դարձնել առավել մրցունակ ու գրավիչ:

Մեր բարոյական պարտականությունն է տալ յուրաքանչյուր երեխային հնարավոր լավագույն կրթությունը:

Չետագոտության այս թեման պատահականորեն չեմ ընտրել: Իմ աշխատանքային գործունեության ընթացքում թեման դարձել է հիմնախնդիր և ուզում եմ ներկայացնել նաև, քանի որ այն արդիական է:

21-րդ դարի դպրոցի հրամայականներից է դարձել համապատասխանել

ժամանակակից սովորողի հետաքրքրությունների շրջանակին, փնտրել և կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաների այնպիսի գործիքներ ու

մեթոդներ որոնք կհետաքրքրեն, մեծ ցանկություն կառաջացնեն սովորելու, միևնույն ժամանակ չեն խաթարի սովորողի բարոյահոգեբանական ներաշխարհը: ԵՎ ինչպես Դ Պարկերն է ասում. «Ձանձրույթի բուժումը

հետաքրքրասիրությունն է : Չետաքրքրասիրությանը բուժում չկա»:

Սովորողին տեղեկատվական աշխարհում ապրել սովորեցնելը ժամանակակից դպրոցի ամենակարևոր խնդիրներից մեկն է: Նոր գիտելիքների անհրաժեշտությունը, ՏՐՏ գրագիտությունը նպաստում են

Նորարարական կրթության, որում տեղեկատվական տեխնոլոգիաները ինտեգրող կարևոր դեր ունեն:

Ջետազդոտության թեմայի արդիականության համար հիմք է հանդիսացել նոր տեխնոլոգիաների համատարած կիրառման պայմաններում սովորողին ճիշտ ուղղորդելու, վերահսկելու անհրաժեշտությունը, որի հիմքում համակարգչային կախվածության կործանիչ ազդեցությունից սովորողին գերծ պահելն է:

Ուրեմն համատեղ ջանքերի շնորհիվ հնարավոր է լուծել այդ խնդիրները: Դրա համար անհրաժեշտ է յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ, պատրաստ լինել շարունակական ուսման:

ՄԱՍ 1

Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման
խնդիրներն ու նպատակները



21-րդ դարում մարդ արարածը մուտք է գործել նոր դարաշրջան, որն արագությամբ փոփոխության է ենթարկում նրա հասարակական կյանքը: Կրթությունը որպես մշակույթի ոլորտում հանդես եկող առանձնահատուկ գործունեություն, բնականաբար հեռու չի մնում այդ գործընթացից: Մանկավարժության տեսանկյունից առկա են հետևյալ **խնդիրները.**

- Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաները լրացուցիչ կրթության մեջ:
- Նոր տեղեկատվական տեխնոլոգիաները որպես ստեղծագործական կարողությունների և մասնագիտական կողմնորոշման միջոց:
- Ուսուցման որակի ապահովման և կրթական համակարգերի (բաց կրթության) կառուցման սկզբունքները :
- Տեղեկատվական հասարակության մեջ գլոբալիզացիան և

կրթության և կրթական ծառայությունների ինտեգրումը:

- Կրթության հոգեբանական, մանկավարժական խնդիրները տեղեկատվական հասարակության մեջ:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը անհատի մտավոր զարգացման վրա:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների դաստիարակչական ազդեցությունը:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման վրա և այլն:

Վերջինս հետ կապված հետազոտության արդյունքներն էլ որոշեցին **Նպատակս՝** ոչ միայն ներկայացրել բովանդակությունը, անդրադառնալ խնդիրներին ու լուծումներին, այլ նաև զետեղել նյութեր, որոնք կօգնեն ուսուցչին և ծնողին:

Այսօր ժամանակները փոխել են ամեն ինչ և իրենց կնիքն են դրել մանկության ու պատանեկության վրա: Այդ տարիները կարևոր փուլերն են սովորողների կյանքի:

Մանկության և պատանեկության տարիները բոլորն էլ սիրով են հիշում: Դրանք անհոգության, ազնվության, ուրախության, միամտության օրերի ամբողջությունն են:

Մաս 2

Ջեռուստացույցի, բջջային հեռախոսի, համակարգչի, համացանցի ազդեցությունը սովորողի հոգեբանության զարգացման վրա:

Մանուկների հոգին պարզ ու մաքուր է:

Նախկին բակային և մանկական խաղերին փոխարինելու եկան հեռուստացույցը, բջջային հեռախոսը, համակարգիչը, համացանցը: Սա արդիական է մեր օրերի համար:

Ջեռաբրքիր է, որ Windows նշանակում է <<պատուհաններ>>: ԵՎ հենց

այդ <<պատուհաններից>> է գրավչությունն ու պոթությունը մտնում մեր տները

<<սպանելու>> մեր երեխաներին:



Ջեռուստացույցը մեր կենցաղի ամենօրյա ուղեկիցն է: Այն կլանում է թե՛ մեծերին, և թե՛ փոքրերին: ՈՒ մենք նույնիսկ չենք մտածում նրա օգտակարության և վնասակարության մասին:

Սակայն կան որոշակի սկզբունքներ, որոնք անհրաժեշտ է

կիրառել սովորողի հոգեկան առողջության պահպանման համար: Թեև հեռուստացույցը կարող է նաև ընդլայնել մեր հոգևոր հորիզոնը, օգնել լուծելու շատ խնդիրներ ցանկալի արդյունքի հասնելու համար: Բայց չմոռանանք, որ հեռուստացույցն ունի

հիպնոտիկ դաշտ, որը ստիպում է երեխային ժամերով գամվել նրա առաջ: Դրա հետևանքով ուշադրությունը դառնում է ցրված, տեսողությունն ու լսողությունը բթանում են, իջնում է ճանաչողական գործընթացների արագությունը, մեծանում է զգացմունքային ռեակցիան: Երեխայի հոգեկան կառուցվածքի վրա ազդում է ռեժիսորների մի մասի կասկածելի նորամուծությունները՝ դաժանությունը, սպանությունները, արյունը... Դիտումն ու ընդօրինակումը ամենաարդյունավետ ուսուցման մեխանիզմներից են: Ջետկաբար պետք է լուրջ մտածել, թե մեր երեխաները ի՞նչ մուլտֆիլմեր և հաղորդումներ են դիտում, ի՞նչ համակարգչային խաղեր են խաղում :




Յամակարգիչն ու համացանցը լինելով 20-րդ դարի ամենատարածված և ամենաբարդ տեխնոլոգիաներից մեկը դադարում է սոսկ հզոր տեխնիկական միջոց լինելուց և դառնում է ընկերային կյանքի վրա ազդող գործոն, հասարակական փոփոխությունների գորեղ խթան:

Յամակարգչի վրա ուսումնական միջավայր ստեղծելու գաղափարը

ձևավավորվեց նաև շնորհիվ սովորողի իմացական զարգացման հոգեբանական տեսությունների:

Ըստ հայտնի հոգեբան Ժ.Պիաժեի տեսության՝ սովորողի զարգացումը

կատարվում է չորս փուլով, որոնցից յուրաքանչյուրում նա բնորոշվում է միանգամայն տարբեր իմացական հետաքրքրություններով ու միջավայրում գործելու եղանակներով:



Այս առումով համակարգիչը մեծ հնարավորություն է խոստանում միջավայրեր ստեղծելու համար:

Վերջին տարիներին համակարգիչը դարձավ հասարակական կյանքի բոլոր ասպարեզների անբաժան մասը : Յամակարգիչների ի հայտ գալը և կայծակնային տարածումը՝ տնտեսության զարգացման տեսանկյունից, անշուշտ, դրական երևույթ է, սակայն համակարգչային տեխնոլոգիաներից օգտվողների թվի աճի և համակարգչային համացանցի ընդլայնման հետ հանդիպում ենք մարդու հոգեկան ոլորտի վրա համակարգչի բացասական ազդեցության երևույթների: Գիտատեխնիկական առաջընթացը նպաստել է

համակարգչային տեխնոլոգիաների զարգացմանը՝ տեղեկատվությունը դարձնելով մարդու կյանքի անբաժանելի մասը: Համացանցը այսօր ոչ միայն կապ և տեղեկատվություն է տրամադրում, այլև այնտեղ արձարծվում ու բարձրացվում են սոցիալ-մշակութային բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը հաղորդում է դրանց նոր բովանդակություն: Համացանցը տեղեկատվության անփոխարինելի աղբյուր է ուսումնական և սոցիալականացման տեսակետից:

Համակարգիչը և բջջային հեռախոսը հնարավորություն են տալիս հաղթահարել մեկուսացումը ու ձեռք բերել ընկերներ, խորհրդատվություն ստանալ մասնագետից առցանց ֆորումների միջոցով, կիսվել սեփական փորձով ստանալ օգնություն կամ խորհուրդ նմանատիպ խնդիրների հետ բախվող որևէ անձից:

Այսօր երեխան աշխարհը ճանաչում է համակարգչի միջոցով՝ խաղեր, մուլտֆիլմեր, նկարներ և այլն: Համակարգչիչն ու համացանցը օգտակար և անհրաժեշտ ինֆորմացիայի աղբյուր են: Սովորողին հուզող բազմաթիվ հարցերի պատասխանները կարող են գտնվել համացանցում: Սովորողի ուշադրությունը, մտածողությունը, տրամաբանությունը կարելի է զարգացնել ճիշտ ընտրված խաղերի և առաջադրանքների շնորհիվ:

Համացանցի բացասական կողմերից մեկն էլ այն է,որ ինֆորմացիան չի վերահսկվում, չկան տարիքային սահմանափակումներ ու արգելքներ:

Սեռերի և սեռական կյանքին վերաբերող տեղեկությունների ու տեսանյութերի, անառողջ փոխհարաբերությունների ներկայացումը կարող է խեղաթյուրել դեռահասների և պատանիների տարիքին բնութագրական չձևավորված սեռական, սոցիալական, հոգեկան ոլորտների զարգացման ընթացքը: Այս <<գերժամանակակից>> երևույթը կարող է ոչ

միայն բթացնել և ուժեղացնել մենության զգացումը, այլ նաև անհանգստություն և դեպրեսիա առաջացնել՝ դարձնելով մարդուն չափազանց զգայուն:

Նյարդաբան Պիտեր Ուայբրոուն համակարգիչներն անվանում է <<էլեկտրոնային կոկային>>: Դրանք կարող են մոլագարի հաճույքի նույնպիսի առաջացնել, որ ընդմիջվում է դեպրեսիայով: Տուժում են ծնողի հետ հարաբերությունները, հատկապես, երբ նրանց փորձում են հեռացնել, կտրել համակարգից:

Համակարգից կախվածության հոգեբանական հարցը երբեմն համեմատվում է հիվանդագին խաղամոլության հետ:

Այստեղ արդեն անհրաժեշտ է մեղիագրագիտությունն ու մեղիադաստիարակությունը: Մեղիագրագիտությունն անհրաժեշտ է բոլորին՝ մասնավորապես դպրոցահասակներին: Եթե նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի սովորողը վերահսկվում է ծնողի կողմից, ապա հիմնական և ավագ դպրոցի սովորողները առավել ազատ են, հետևապես անհրաժեշտ է մեղիադաստիարակությունը: Մեղիագրագետ սովորողը, քաղաքացին ունի բարձր գիտակցված մակարդակ, ցանկացած իրավիճակում կարողանում է արագ կողմնորոշվել և տեղեկատվական հոսքերից քաղել օգտակար և որպես ուսուցիչ ամենօրյա աշխատանքի շնորհիվ իմ առարկային ինտեգրելով մեղիագրագիտության տարրերը, փորձում եմ դաստիարակել այնպիսի սերունդ, որը հետևելով տեղեկատվական տեխնոլոգիաներից ճիշտ օգտվելու կանոններից, կարող է խուսափել բազմաթիվ խնդիրներից: Օրինակ վեբ կայքի օգնությամբ կարող ենք ստեղծել մեր սեփական էջը:

Այստեղ հնարավոր կլինի տեղեկություններ տեղադրել ուսուցիչների, ծնողների, երեխաների համար՝ նյութեր

դասաժամերի համար, ծնողական ժողովների ամփոփագրեր, տարբեր տարիքի երեխաների հոգեբանական բնութագրեր, տեղեկություններ վատ առաջադիմության և սովորողի վարքագծի խնդիրների մասին, տարբեր առաջարկություններ: Կարող ենք տեղադրել նաև հետաքրքիր համակարգչային խաղեր, թեստեր, հանելուկներ, ուսումնական ծրագրեր:

Մյուս միջոցը [ցանցային](#) կապն է: Այն հիմնականում տարածված է երիտասարդների շրջանում: Մարդիկ ամեն օր շփվում են տարբեր թեմաներով, փոխանակում լուսանկարներ, տեղեկություններ, փորձառություններ` առանց տանից կամ աշխատավայրից դուրս գալու:

Կրթական հաստատություններում ցանցային կապն այնքան էլ տարածված չէ, բացառությամբ էլեկտրոնային փոստի: Ընդհանուր առմամբ, հաղորդակցության այս տեսակի միջոցը կարող է ներառել հոգեբանի անմիջական շփումը ուսուցիչների, սովորողների, ծնողների, այլ ուսումնական հաստատությունների գործընկերների հետ` ինտերնետի միջոցով, էլեկտրոնային փոստի միջոցով, ICQ համակարգի միջոցով, ինչպես նաև` շտրիկի դպրոցների տեղական Օգտվելով այս համակարգերից կարելի է ուղարկել անհրաժեշտ տեղեկատվություն, խորհրդատվություն անցկացնել, կրթական աշխատանքներ իրականացնել տեղում:

Իրականությունը այն է, որ հեռակառավարման միջոցների օգնությամբ հաճախ հնարավոր է լինում շատ ավելի արագ պատասխան ստանալ, խնդիր լուծել և տեղեկատվություն փոխանցել թիրախային խմբերի ներկայացուցիչներին:

[Մեդիա շտրիկները](#)

Սեմինարի, գրույցի, ծնողական ժողովների անցկացման կարևոր գործոններից է, քանի որ կա ներկայացված նյութերի

տեսանելիությունը: Նման դեպքերում շատ տարածված է պրեզենտացիաների օգտագործումը: Տեսասահիկների միջոցով մեր ունկնդիրները կկարողանան ոչ միայն ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, այլև տեսնել կարևոր պատմություն, դիտել հետաքրքիր լուսանկարներ, ծանոթանալ առաջարկություններին: Իսկ ցանկության դեպքում և ձեր համաձայնությամբ սեմինարի մասնակիցները կարող են ներբեռնել շնորհանդեսը, ապա ավելի մանրամասն ծանոթանալ թեմային: Մեղիա շնորհանդեսները ունեն ևս մեկ նշանակալից առավելություն՝ նյութ տպելու և պատճենելու կարիք չկա, բոլոր կարևոր կետերն արտացոլվում են էկրանին: Բացի այդ, նյութը կարելի է գունեղ ձևավորել, դրա մեջ տեղադրել երաժշտական և վիդեո հատվածներ:

Համակարգչային տեխնոլոգիաները լայնորեն կիրառվել են դպրոցական հոգեբանի ուղղիչ զարգացնող աշխատանքում: Նման տեխնոլոգիաները ներառում են կրթական և զարգացնող բնույթի համակարգչային ծրագրեր: Դրանց օգտագործումը նպաստում է սովորողների ճանաչողական գործընթացների զարգացմանը՝ բարձրացնելով դպրոցականների վերապատրաստման և կրթական մոտիվացիայի արդյունավետությունը, ինչպես նաև նրանց մտավոր և ստեղծագործական կարողությունների զարգացումը:

Ուսումնական խաղերը երեխաների կարողությունների շտկման ու զարգացման ամենապարզ և մատչելի տեսակն են: Առավել հաճախ՝ ճանաչողական, համակարգչային կրթական խաղերը գոյություն ունեն ընդհանուր անուններով, ինչպիսիք են տրամաբանական խաղերը, ճանաչողական խաղերը, կրթական խաղերը և այլն: Մի շարք խաղեր կարող են օգտագործվել հիմնական հուզական և

վարքային խանգարումները շտկելու համար (մեկուսացում, վախ, ագրեսիա և այլն):

Շատ դպրոցական հոգեբաններ հոգեբանության դասեր են անցկացնում: Մեդիադասերի շրջանակներում ՏՅՏ-ն ավելի շատ գործում է որպես ուսուցման գործիք, որն ընդունակ ձեռքերում կարող է օգնել, հակառակ դեպքում կարող է վնասել: Գրագետ մեդիա դաս կազմակերպելը հեշտ չէ: Մի կողմից պետք է լավ իմանալ, թե ինչպես կարելի է որոշակի թեմա ներկայացնել ՏՅՏ-ի միջոցով: Մյուս կողմից, պետք է ունենալ բավարար պատրաստվածություն, որպեսզի կամ դասի համար ստեղծի անհրաժեշտ համակարգչային նյութեր, կամ տիրապետի առկա ծրագրերին և կարողանա դրանք ճիշտ օգտագործել:

ՄԱՍ 3

SRS -ի կիրառումը մաթեմատիկայի դասապրոցեսում

Դպրոցական մաթեմատիկայի ուսուցման գործընթացում նոր տեխնոլոգիաների կիրառման շարքում համակարգչային ցուցադրումները առանձնահատուկ տեղ են գրավում: Հաշվի առնելով ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառության կարելուրդները մաթեմատիկայի դասավանդման պրոցեսում և դասը կամ գործնական աշխատանքը առավել հետաքրքիր ու դիտարկտիկ ներկայացնելու համար բազմիցս օգտվել են ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ կայքից: Այնտեղ տեղակայված տեսադասերից՝ հատկապես իմաստի ընկալման ժամանակ: Կշռադատման փուլում հաճախ օգտվում են գործնական աշխատանքներից, որտեղ դասի նյութի վերաբերող հարցեր է տրվում սովորողին: Ճիշտ պատասխանի դեպքում անցնում են հաջորդ հարցին, սխալ պատասխանի դեպքում հուշում ճիշտ պատասխանը: Նմանատիպ դասերը հիմնականում ուղեկցվում են խանդավառությամբ: Քննարկումներին ներգրավվում են բոլորը: Գործնական աշխատանքը կատարում ենք խմբերով: Տեսադասերը ավելի դիդակտիկ ու պատկերավոր են ներկայացնում դասը, որը վերաբերում է այնպիսի թեմաներին որոնցում նկարագրվող երևույթները կարդալով կամ պատմելով որոշ սովորողների մոտ լիարժեք չեն ընկալվում: Նման դասերը հարմար է կիրառել ամփոփման ժամանակ:

Յուրաքանչյուր ուսուցիչ գիտի, որ միայն թեստավորումն ու արդյունքներ մշակելը բավարար չէ: Անհրաժեշտ է նաև գրագետ և գեղեցիկ հաշվետվություն կազմել, արդյունքները ներկայացնել ադմինիստրացիայի, ուսուցիչների և ծնողների

համար հասկանալի ու հասանելի ձևով:


Այստեղ կարող ենք օգտվել Microsoft Word ծրագրից,որի օգտագործումը թույլ է տալիս օգտագործել աղյուսակներ, գրաֆիկներ, գծապատկեր, տեղադրել տարբեր գծագրեր, լուսանկարներ և այլն:

Имя: _____ Дата: _____

НАСТОЯЩАЯ ТАБЛИЦА УМНОЖЕНИЯ

Заполни таблицу умножения.

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1	1	2								
2	2	4								
3										
4										
5										
6										
7										
8										



Power Point ծրագիրը օգնում է մշակել և օգտագործել մանկավարժական ու ծնողական ժողովներում

արդյունքները ներկայացնելու ժամանակ:

Յոգեբանական արդյունքների գրանցումը և պահպանումը ուսուցիչներիս համար շատ կարևոր նաև երբեմն խնդրահարույց է: Բանը նրանում է, որ կատարված աշխատանքները երբեմն մոռանում ենք գրանցել տետրերում կամ մատյանում: Էլեկտրոնային փաստաթղթերի կառավարման գալուստով հոգեբանի կողմից պահվող տեղեկությունների քանակը աճել է: Արդյունքները հոգեբանի կողմից մուտքագրվում են և ավտոմատ կերպով տեղաբաշխվում տարբեր ուղղություններով: Կարող ենք արդյունքները արագ տպել:

Չարմար է ունենալ Էլեկտրոնային գրադարան, քանի որ, երբեմն առաջանում է նաև տեղի խնդիր նոր թղթապանակների համար: Այսպիսով մեր ամբողջ տեղեկատվությունը կունենա Էլեկտրոնային ձև, և տարածքի պակասի խնդիրը կվերանա:

Այժմ ներկայացնեմ նորագույն տեխնոլոգիաների ու մեթոդների մի քանի տարբերակ, որոնցով վարել եմ դասեր:

1) **Microsoft Teams** ծրագիր,որով կարելի է լուծել որոշակի խնդիրներ, քանի որ այն համագործակցության և հաղորդակցության աշխատանքային տարածք է ստեղծում: Դասի ընթացքում օգտագործված սահիկները, տեսանյութերը կարելի է տեղադրել համակարգում ` սովորողներին հասանելի դարձնելով դասերից հետո: Չամակարգն ունի հնարավորություն սովորողի տեսախցիկը, ձայնը կարգավորելու,դասը ձայնագրելու:Երևում է նաև մասնակցի մուտքի ժամը, ներկայության ժամը: Կարելի է հաղորդագրություն ուղարկել: Այդ ծրագրում կարելի է ստեղծել տարբեր խմբեր:

2) **Zoom** տեսակոնֆերանսների ծրագրը: Այստեղ կարող են մի քանի մասնակից միաժամանակ տեսանյութ և տեքստային զրույց վարել:Կա անվճար տարբերակը ` մինչև

40 րոպե ժամանակով, մինչև 100 օգտատեր:

Այս ծրագրի պահանջարկը աճեց համաճարակի պայմաններում, երբ հարկադրված անցում կատարվեց հեռավար ուսուցման: Zoom-ն ապահովում է գրեթե բոլոր հնարավորությունները հեռավար դասընթացների կազմակերպումն իրականացնելու համար: Այստեղ ուսուցիչն կարող է իր էկրանին միացնել <<Learning Apps>>-ով պատրաստած խաղ և դասարանի հետ միասին կատարել այն: Սովորողը աշխատում է էկրանին, իսկ ուսուցիչը օգնում է նրան: Այս պարագայում մեծանում է սովորողի հետաքրքրությունների շրջանակը:

Գոյություն ունեն նաև խաղային տեխնոլոգիաներ, որոնց տեղը, դերը և անհրաժեշտությունը դասապրոցեսում որոշում է ուսուցիչը: Դասի հաջողության գրավականը հանդիսանում է ուսուցչի այդ տեխնոլոգիաներին հմտորեն տիրապետելով: Պետք է ճիշտ համադրել խաղն ու գիտելիքները:

Կրթական նպատակը սովորողների առջև դրվում է իբրև խաղի նպատակ, ուսումնական գործունեությունը՝ որպես խաղի պայման, դասի նյութը դառնում է նպատակին հասնելու միջոց: Խաղերը լինում են

- ուսուցանող, վարժեցնող, կենտրոնացնող, ամփոփող
- ճանաչողական, դաստիարակչական, զարգացնող
- ստեղծագործական, վերարտադրողական
- համագործակցային, ախտորոշիչ, կողմնորոշիչ, հոգեբանական:

Այս հետազոտությունը ցույց տվեց, որ կա նոր կրթական փոփոխությունների անցնելու պահանջ, ինչն էլ կապված է նոր չափորոշիչներն իրագործող ուսուցչի գործունեության մեջ հիմնարար փոփոխություններ կատարելու հետ: Փոխվում են նաև ուսուցման տեխնոլոգիաները, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների

ներդրումը մեծ հնարավորություն է բացում հանրակրթական ուսումնական հաստատություններում յուրաքանչյուր առարկայի կրթական շրջանակն ընդլայնելու համար: Ուսուցչի առջև դրված է խնդիր՝ գիտելիքների, հմտությունների, հմտությունների կուտակմանն ուղղված ավանդական կրթությունը վերածել սովորողի անհատականության զարգացման գործընթացի: ՏՐՏ-ի կիրառումը թույլ է տալիս վերացնել կրթական միջավայրի միապաղաղությունը և պայմաններ է ստեղծում սովորողների գործունեության տեսակները փոխելու համար: Ուսուցչը կարող է ընտրել տեխնոլոգիաները ելնելով առարկայի պահանջներից ու հնարավորություններից, օրվա դասի բովանդակությունից, նպատակներից, սովորողի տարիքային առանձնահատկություններից:

Գիտելիքը մարդուն դարձնում է ազատ ու մեծ: Իսկ ուսուցիչը պետք է տիրապետի կիրառելի տեխնոլոգիաներին՝ սովորողին գիտելիքի բարձր մակարդակի հասցնելու համար: **Մ.Գորկին ասել է. «Ուսուցիչը պետք է ուշադիր աշակերտ լինի»:**

Ուսուցիչը պետք է մշտապես սովորի, թևաթափ չլինի, նայի առաջ, գործի առաջադեմ հայացքներով: Պետք է հասկանալ, որ տեղեկատվական տեխնոլոգիաների իմացությունը ժամանակակից աշխարհում դասվում է այնպիսի որակների կողքին ինչպիսիք են կարդալու և գրելու կարողությունները: Մարդկային կյանքի և հոգու ոչ մի անկյունը զերծ չի մնացել այդ ազդեցությունից: Հասարակության համար ստեղծվել է նոր աշխարհ: Տեղեկատվական տեխնոլոգիաները թելադրում են կյանքի ընթացքն ու ճանապարհը: Ու քանի որ ժամանակակից կրթությունը պահանջում է ապահովել կյանքի սերտ կապը ժամանակի մարտահրավերներին, գիտատեխնիկական առաջընթացին և օրենսդրական փոփոխություններին՝ մենք օգտագործելով

տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները
զարգացնում ենք սովորողի տրամաբանությունը,
երեւակայությունը, մտահորիզոնի մեծացմանը: Ուսուցիչը
Նվիրյալ է, քանի որ հստակ գիտակցում է՝ իրեն է վստահված
վաղվա օրվա մարդու ձևավորումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով համակողմանի ուսումնասիրության արդյունքում կատարեցինք որոշակի դիտարկումներ: Եկանք այն համոզման, որ <<Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ>> կրթական կայքի պահոցում ամբողջացված մաթեմատիկայի վերաբերյալ ուսումնական և մեթոդական նյութերը կարելի է կիրառել դասավանդման ընթացքում: Գործընկերային շփումների համար այդ հարթակը հարմար է, կարելի է անց կացնել մաթեմատիկայի ուսուցիչների հետ քննարկումներ: Կրթական այդ կայքը մշտապես թարմացվում է, որն էլ թույլ է տալիս մշտապես տեղեկանալ նորարարական մոտեցումներին:

Սովորողի համար էլ է հարթակը օգտակար:

Տեղեկատվական տեխնոլոգիաները բարձրացնում են դասի ինֆորմատիվությունը, դասավանդման արդյունավետությունը: Սովորողներին ներգրավելով այդ աշխատանքներին՝ կարելի է հետաքրքրություն առաջացնել առարկայի նկատմամբ, զարգացնել նրանց ստեղծագործական միտքը, միևնույն ժամանակ հետ պահել ինտերնետային վնասակար կախվածությունից, որը կխաթարի նրա հոգեբանական հավասարակշռությունը:

Ուրեմն մենք պետք է կարողանանք ճիշտ և նպատակային ուղղորդել սովորողին օգտվելու տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներից:

Օգտագործված գրականություն

1. Ա. Յովհաննիսյան, Կ. Յարությունյան, Ս. Խրիմյան և ուրիշներ, <<Համագործակցային ուսուցում >> ձեռնարկ, 2006թ
2. Բալյան Ա. Ա.<<Մանկավարժական հոգեբանության հարցեր>>, Երևան Լույս 1983
3. Լ. Թորքոմյան ,<<Մանկավարժական հիմունքներ>>
4. Բանակի հատոր առաջին
5. Սերգեյ Մանուկյան <Ընդհանուր մանկավարժություն>> 2005թ